ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀԱՆ-ՍԲՍ 115

30.03.2018թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Նելսոն Զուլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Սուբսիդիա հատկացնող/, մի կողմից, և Գանձաղբյուր ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Գրիգորյանի, որը գործում է Գանձաղբյուր ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Սուբսիդիա ստացող/, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սուբսիդիա հատկացնողը հանձնարարում է Սուբսիդիա ստացողին, իսկ վերջինս պարտավորվում է սույն պայմանագրով տրամադրվող գումարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման, իրականացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.06.2002թ.-ի թիվ 867-Ն և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 15.03.18թ. թիվ 270-Ն որոշումներով սահմանված պահանջների ապահովում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սուբսիդիա հատկացնողը պարտավոր է՝

2.1.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ Սուբսիդիա ստացողից ընդունել «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման վճարների հաշիվները և փոխհատուցել դրանց համար կատարված ծախսերը՝ 70%-ի չափով:

2.2. Սուբսիդիա հատկացնողը իրավունք ունի՝

2.2.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Սուբսիդիա ստացողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը, առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և Սուբսիդիա ստացողի կանոնադրությամբ սահմանված դեպքերի),

2.2.2. Սուբսիդիա ստացողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.2.3. վերահսկել Սուբսիդիա ստացողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.3. Սուբսիդիա ստացողը պարտավոր է՝

2.3.1. ժամանակին, լրիվ ծավալով, պատշաճ ձևով ու կարգով Սուբսիդիա հատկացնողին ներկայացնել էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման վճարների հաշիվները՝ դրանք փոխհատուցելու նպատակով,

2.3.2. Սուբսիդիա հատկացնողին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին,

2.3.3. ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները սույն պայմանագրի կատարման համար առաջացած բոլոր տեսակի խոչընդոտները անհապաղ վերացնելու համար,

2.3.4. Սուբսիդիա հատկացնողի պահանջով ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող բոլոր տեսակի փաստաթղթերը:

2.4. Սուբսիդիա ստացողն իրավունք ունի՝

2.4.1. Սուբսիդիա հատկացնողից պահանջել ընդունել էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման վճարները փոխհատուցելու վերաբերյալ հաշիվները, եթե աշխատանքները կատարվել են պատշաճ լրիվ ծավալով, պատշաճ ձևով ու կարգով,

2.4.2. Սուբսիդիա հատկացնողից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.4.3. պահանջել վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի կատարման ընդհանուր արժեքը սահմանված է առավելագույնը 30 000 000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ, որը վճարվում է Սուբսիդիա ստացողի կողմից փաստացի ներկայացված հաշիվների հիման վրա÷

3.2. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարը Սուբսիդիա հատկացնողն պետք է Սուբսիդիա ստացողին վճարի սույն պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Սուբսիդիա ստացողի կողմից աշխատանքների կատարման, սույն պայմանագրով, սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտվելու դեպքում Սուբսիդիա հատկացնողն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարի չափը:

3.4. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարն իր մեջ է ներառում սույն պայմանագրի կատարման հետևանքով Սուբսիդիա ստացողի կողմից վճարման ենթակա բոլոր տեսակի հարկերի, տուրքերի ու պարտադիր վճարների գումարները, որոնք Սուբսիդիա ստացողը, հանդիսանալով հարկային գործակալ, պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման համայնքների բյուջեներ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի, սույն պայմանագրի հաճախակի (շարունակաբար) կամ կոպիտ (էական) խախտման դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

6.4. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի երկկողմ գրավոր համաձայնություն կազմելու միջոցով:

6.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.6. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում կամ սահմանափակվում:

7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆՈՂ	ՍՈՒԲՍԻԴԻԱ ՍՏԱՑՈՂ
ՀՀ ԱՆ աշխատակազմ	Գանձաղբյուր ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ գ. Արզական
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Բանկային հաշիվ՝ 900011019701	Բանկային հաշիվ՝ 1150004614710100
ՀՎՀՀ՝ 02507171	ՀՎՀՀ՝ 03011286
ՀՀ ԱՆ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Նելսոն Զուլոյան	Տնօրեն՝ Արման Գրիգորյան
---------- Apr 13 2018 10:29 AM (ստորագրություն)	Digitally signed by GRIGORYAN ARMAN 4008920344 (ստորագրություն)
Հեռ: +37460808003 Ֆաքս: E-mail: info@moh.am	Հեռ: +37498318877 Ֆաքս: E-mail: hovsepyannarine@mail.ru